ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/8» ԾԱԾԿԱԳՐՈՎ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 02-ը փետրվարի 2018թ.
Ժամը 11[30]

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
ՀՀ ՊՆ աշխատակազմի ղեկավարի տեղակալ, ՔՀԾ 2-րդ դասի պետական խորհրդական Ս. Աբովյան,
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության պետի տեղակալ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Մ. Խալաթյան,
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, լեյտենանտ Հ. Բաղալյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան,
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ռ.Մարդոյան:

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/8» ծածկագրով մրցույթի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ռ. Մարդոյան)

1. «Նիիէլեկտրոմաշ» ԳԱՁ ՓԲԸ-ի կողմից որպես շտկում ներկայացված փաստաթղթերի քննարկման վերաբերյալ:
2. Ընտրված մասնակցին հայտարարելու մասին
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. «Նիիէլեկտրոմաշ» ԳԱՁ ՓԲԸ-ի կողմից որպես շտկում ներկայացված փաստաթղթերի քննարկման վերաբերյալ

(Ռ. Մարդոյան)

1.1 Քննարկելով «Նիիէլեկտրոմաշ» ԳԱՁ ՓԲԸ-ի կողմից որպես թիվ 4 արձանագրության 1.1 կետով նախատեսված անհամապատասխանությունների շտկում ներկայացված փաստաթղթերը՝ հանձնաժողովը որոշեց դրանք գնահատել հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Ընտրված մասնակցին հայտարարելու մասին

(Ռ. Մարդոյան)

2.1 ***ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն, իսկ հրավերով նախատեսված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջներն առկա են:***

2.2 Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց բոլոր առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/8» ծածկագրով մրցույթի հրավերի պահանջներին, վերջիններիս հայտարարել ընտրված(հաղթող) մասնակից այն չափաբաժիններում, որտեղ նրանք ճանաչվել էին առաջին տեղ զբաղեցնող մասնակից և անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

2.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/8» ծածկագրով մրցույթի արդյունքում պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ռ. Մարդոյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրերի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11[00]-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)	Ս. Աբովյան
Գնահատող	Մ. Խալաթյան
Գնահատող	Ա. Մաղաքյան
Գնահատող	Հ. Բաղալյան
Գնումները համակարգող՝	Ռ. Մարդոյան